ԼԵՎՈՆ ԶՈՒՐԱԲՅԱՆ

1936-1939թթ. ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՑԻՍՏԱԿԱՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՇՓՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Առաջին աշխարհամարտում հաղթանակած Անտանտի երկրների միջև Մերձավոր Արևելքում ազդեցության ոլորտների բաժանումից հետո Գերմանիան շարունակեց ճանապարհներ փնտրել Միջերկրական ծովի արևելյան ափին իր ազդեցությունը տարածելու համար՝ փորձելով նաև համագործակցության եզրեր գտնել այդ տարածաշրջանի արաբ առաջնորդների հետ: 1936-1939թթ. Պաղեստինում բրիտանական մանդատային իշխանության դեմ ապստամբությունն[1] արաբ ղեկավարների և նացիստական Գերմանիայի ներկայացուցիչների միջև արդեն իսկ գոյություն ունեցող որոշակի շփումներն ակտիվացնելու հարմար առիթ էր: Պատահական չէ, որ արաբական ապստամբության ղեկավարությունը փորձում էր ստանալ Գերմանիայի աջակցությունը, իսկ վերջինս էլ ձգտում էր արաբ ղեկավարների հետ հարաբերությունների ակտիվացումը ծառայեցնել վերոհիշյալ տարածաշրջանում իր ազդեցությունն ու դիրքերն ամրապնդելու նպատակին՝ փորձելով էլ ավելի խորացնել Պաղեստինում բրիտանական մանդատային իշխանության հանդեպ արաբական շրջանակներում առկա դժգոհությունը: Այդ առումով վերոհիշյալ ապստամբության ղեկավարության և գերմանացիների միջև շփումների հարցի ուսումնասիրությունը խիստ հետաքրքրական է:

Բրիտանական մանդատային իշխանության հանդեպ արաբների դժգոհությունն առաջացնող հրեական ներգաղթը, հրեաների՝ Պաղեստինում գերակա դիրքեր գրավելու ձգտումը, ինչպես նաև արաբական ազգայնականության ընդհանուր վերելքը 1936-1939թթ. Պաղեստինում արաբական ապստամբու-

[1] Այդ եռամյա գինված ապստամբությամբ պաղեստինցի արաբներն արտահայտեցին իրենց դժգոհությունը բրիտանական մանդատային իշխանության հանդեպ՝ ցանկանալով կասեցնել հրեական ներգաղթը Պաղեստին և հասնել անկախ պաղեստինյան արաբական պետության ստեղծմանը: Ըստ բրիտանական պաշտոնական տվյալների՝ եռամյա ապստամբության ընթացքում արաբահրեական բախումների և Պաղեստինում կարգ ու կանոն հաստատելու նպատակով բրիտանական մանդատային իշխանության ձեռնարկած քայլերի արդյունքում զոհվեց 3073 արաբ և մոտ 1000 հրեա, Տե՛ս՝ Walid Khalidi, From Haven to Conquest, Beirut, 1971, p. 847; Anita Shapira, Eyeless in Zion, New Republic, Vol. 223, Issue 24, November 2000, pp. 10-26.

թյան հիմնական պատճառներից էին[2]: 1936թ. ապրիլի 25-ին կազմավորված ապստամբության ղեկավար մարմնի՝ Արաբական գերագույն կոմիտեի նախագահ, Երուսաղեմի Մուֆթի Հաջ Ամին ալ-Հուսեյնին, նախապես որոշակի հարաբերություններ հաստատելով նացիստական Գերմանիայի ներկայացուցիչների հետ, փորձեց բրիտանական մանդատային իշխանությունների դեմ պայքարում ստանալ Գերմանիայի օժանդակությունը[3]: Այդուհանդերձ, դեռևս 1936թ. սկզբին Մուֆթիի պատվիրակների հանդիպումները նացիստական Գերմանիայի ներկայացուցիչների, մասնավորապես Ռեյխսբանկի նախագահ Յալմար Շախտի և նացիստական երիտասարդական շարժման ղեկավարներից Բալդուր ֆոն Շեյրախի հետ ավելի շատ միտված էին փոխադարձ տրամադրությունների շոշափմանը[4]: Մինչև 1937թ. կեսերը գերմանացիները բավարարվեցին միայն Պաղեստինում հակաբրիտանական քարոզչություն ծավալելով և «գաղութատենչ» անգլիացիների դեմ պաղեստինցի արաբների պայքարը խրախուսելով[5]: Արդյունքում, 1937թ. մայիսին՝ Մուհամմեդ մարգարեի ծննդյան տարեդարձի արարողությունների ժամանակ, պաղեստինցի արաբները կրում էին նաև Գերմանիայի դրոշն ու Ադոլֆ Հիտլերի նկարը[6]:

1937թ. հուլիսի 7-ին բրիտանական կառավարության՝ Պաղեստինի արաբական ապստամբության պատճառներն ուսումնասիրելու և պաղեստինյան հիմնախնդրի համար լուծում առաջարկելու նպատակով ստեղծած հանձնաժողովը (այն նախագահ լորդ Փիլի անունով կոչվեց Փիլի հանձնաժողով) հրապարակեց իր զեկույցը, որում որպես հարցի լուծում առաջարկվում էր Պաղեստինը բաժանել արաբական և հրեական պետությունների՝ Երուսաղեմը, Բեթղեհեմը և Նազարեթը սրբավայրերի պահպանության նպատակով թողնելով բրիտանական մանդատային իշխանության վերահսկողության ներքո[7]:

Պաղեստինի բաժանման այդ ծրագրի ի հայտ գալուց հետո 1936-1939թթ. Պաղեստինում արաբական ապստամբության ղեկավարությունն էլ ավելի շահագրգռվեց բրիտանական մանդատային իշխանությունների դեմ

---

[2] Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut, 1970, p. 245; Е. Д. Пырлин, 100 лет противоборства (1897-1997), Москва, 2001, стр. 53; John Marlowe, Arab Nationalism and British Imperialism, London, 1961, p. 34.

[3] Muftism and Nazism. http://notendur.centrum.is/~snorrigb/mufti 4.html.

[4] Говард М. Сакер, История Израиля: От возникновения Сионизма до создания государство Израиль, Иерусалим, 1976, стр.75.

[5] Նույն տեղում, էջ 100:

[6] Muftism and Nazism. http://notendur.centrum.is/~snorrigb/mufti 4.html.

[7] اللجنة الملكية لفلسطين.7 يوليو سنة 1937.<< - ملف وثائق فلسطين. ألقاهرة. 1969. ص625-599.

>>تقرير

պայքարում Գերմանիայի աջակցությունն ստանալու հեռանկարով: Գերմանիան, իր հերթին, բացասական դիրքորոշում ընդունելով Պաղեստինի բաժանման ծրագրի նկատմամբ, իր ազդեցության շրջանակները մեծացնելու նպատակով փորձեց սիրաշահել պաղեստինցի արաբներին՝ դրա հետ մեկտեղ զգուշանալով Մեծ Բրիտանիայի հետ հարաբերություններում ավելորդ լարվածություն առաջացնելուց: 1937թ. հունիսի 1-ին, երբ վերոհիշյալ հանձնաժողովի զեկույցի բովանդակությունն ընդհանուր առմամբ արդեն հայտնի էր գերմանական կառավարությանը, Ռեյխի (գերմանական պետությունը) արտգործնախարար Կոնստանտին ֆոն Նոյրատը շրջաբերական ուղարկեց Մեծ Բրիտանիայում, Երուսաղեմում և Իրաքում Գերմանիայի դիվանագիտական առաքելություններին մասնավորապես նշելով.

«1.Հրեական պետության ստեղծումը Գերմանիայի շահերից չի բխում, քանի որ այն ոչ թե կընդունի բոլոր աշխարհասփյուռ հրեաներին, այլ միջազգային օրենքով ամրագրված հավելյալ ուժային կենտրոն կստեղծի նրանց համար, ինչպես Վատիկանը՝ քաղաքական կաթոլիկության և Մոսկվան՝ Կոմինտերնի համար:

2.Ուստի Գերմանիան շահագրգռված է արաբական աշխարհի ուժեղացման հարցում որպես հակակշիռ աշխարհասփյուռ հրեաների հնարավոր հզորացմանը:

3.Իհարկե, չի ակնկալվում, որ Գերմանիայի ուղղակի միջամտությունն էականորեն կազդի պաղեստինյան հիմնախնդրի զարգացման վրա: Այնուամենայնիվ, խորհուրդ չի տրվում շահագրգիռ օտարերկրյա կառավարություններին ընդհանրապես տեղյակ չպահել մեր տեսակետի մասին:

Հավելված Լոնդոնի համար

Հասկացրե՛ք կառավարությանը (բրիտանական - Լ. Զ.), որ Գերմանիան նույնպես հետաքրքրված է պաղեստինյան հիմնախնդրով: Թեև կառավարությունը (գերմանական – Լ. Զ.) մինչև օրս աջակցել է գերմանաբնակ հրեաների Պաղեստին ներգաղթին[8], ճիշտ չի լինի ենթադրել, որ Գերմանիան կողջունի նաև Պաղեստինում հրեական քաղաքական կառույցի ստեղծումը:

---

[8] 1933թ. օգոստոսին Գերմանիայի Տնտեսության նախարարության և 1902թ. հրեական կապիտալով հիմնադրված Անգլոպաղեստինյան բանկի միջև կնքվեց «Հավարա (Տեղափոխություն)» գաղտնի համաձայնագիրը, որով Հիտլերի վարչակարգը, ցանկանալով հնարավորինս խթանել հրեաների արտագաղթը Գերմանիայից, արտոնյալ պայմաններ սահմանեց Պաղեստին արտագաղթող գերմանաբնակ հրեաների համար: Փիլի հանձնաժողովի՝ Պաղեստինում հրեական պետություն ստեղծելու առաջարկի ի հայտ գալուց հետո այդ համաձայնագրի շարունակելիության հարցը կասկածի տակ դրվեց Գերմանիայում, սակայն այն շարունակեց գործել մինչև II աշխարհամարտը, Տե՛ս՝ Mark Weber, Zionism and the Third Reich, The Journal of Historical Review, Vol. 13, No. 4, July/August 1993, p. 29.

Հավելված Բաղդադի համար

Ուստի պետք է հասկացնել (Պաղեստինի հարևան արաբական երկրներին – Լ. Զ.), որ Գերմանիան ըմբռնումով է մոտենում Պաղեստինում արաբական ապստամբությանը, սակայն՝ առանց որոշակի խոստումներ տալու:

Հավելված Երուսաղեմի համար

Գերմանիայից հրեաների արտագաղթը (Հավարա) խթանող տնտեսական և քաղաքական միջոցառումների հարցի մասին որոշում կկայացնենք ավելի ուշ»[9]:

Այսպիսով, դեմ լինելով Մեծ Բրիտանիայի աջակցությամբ Պաղեստինում հրեական պետության ստեղծմանը, նացիստական Գերմանիան ավելի ակտիվացրեց պաղեստինցի արաբ ապստամբների հետ իր շփումները: Բացի այդ, Փիլի հանձնաժողովի՝ Պաղեստինի բաժանման ծրագրի ի հայտ գալուց հետո գերմանացիները կանգնեցին նաև մեկ այլ խնդրի առջև: 1937թ. Պաղեստինում մոտ 2000 գերմանացի էր բնակվում՝ կաթոլիկ, լութերական և տեմպլեր[10]: Վերոհիշյալ ծրագրով Պաղեստինի վեց գերմանական բնակավայրերից չորսն ընդգրկվելու էին ստեղծվելիք հրեական պետության մեջ, մեկն՝ արաբական, իսկ մյուսը մնալու էր բրիտանական մանդատի ներքո: Մինչդեռ պաղեստինաբնակ գերմանացիները ցանկանում էին, որ իրենց բնակավայրերը մնային բրիտանական մանդատի ներքո կամ ընդգրկվեին ստեղծվելիք արաբական պետության կազմում՝ հասկանալով, որ Գերմանիայում հակահրեական տրամադրությունների[11] պատճառով ստեղծվելիք հրեական պետության մեջ իրենք կարող էին հայտնվել անցանկալի իրավիճակում[12]:

1937թ. երկրորդ կեսին Արաբական գերագույն կոմիտեն արդեն սկսեց հանդես գալ Գերմանիայի աջակցությունն ստանալու պայմանների վերաբերյալ գործնական առաջարկներով: 1937թ. հուլիսի 15-ին Հաջ Ամին ալ-Հուսեյնին հանդիպում ունեցավ Երուսաղեմում Գերմանիայի Գլխավոր հյուպատոս Հանս Դյոհլեի հետ, որի ընթացքում հույս հայտնեց, որ գերմանացիները կաջակցեն

---

[9] „The Foreign Minister to the Embassy in Great Britain, the Consulate General at Jerusalem and the Legation in Iraq, Berlin, June 1, 1937".- Documents on German Foreign Policy 1918-1945, Series D, Vol. V, Washington, 1953, pp. 46-47.

[10] Գերմանացի բողոքականներ էին, որոնք XIX դարում բնակություն էին հաստատել Պաղեստինում՝ ստեղծելով Տեմպլերների (Տաճարականների) միաբանությունը: 1933թ. այդ միաբանության մոտ 1000 անդամներն իրենց հավատակից Տեմպեր Բեռլինի ջանքերով ընդգրկվել էին Գերմանիայի Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության մեջ:

[11] Գերմանիայում նացիստների իշխանության գալուց հետո գերմանաբնակ հրեաներն աստիճանաբար դուրս էին մղվում այդ երկրի հասարակական-տնտեսական կյանքից:

[12] „The Consul General at Jerusalem to the Foreign Ministry, Jerusalem, July 13, 1937".- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 753-755.

Պաղեստինում արաբական ապստամբությանը, ինչպես նաև առաջարկեց իր գործակալներից մեկին ուղարկել Գերմանիա՝ այդ երկրի իշխանությունների հետ քննարկելու Պաղեստինում գերմանացիների հետաքրքրությունների շրջանակների և արաբական ապստամբությանը Գերմանիայի աջակցության հնարավորության հարցերը[13]: Ռեյխի արտգործնախարարությունից ցուցումներ ստանալով 1937թ. օգոստոսի 10-ին Դյոհլեն Մուֆթիին տեղեկացրեց, որ գերմանացիները գերադասում էին պաղեստինցի արաբ ապստամբների ներկայացուցիչների հետ վերոհիշյալ հարցերի շուրջ քննարկումներ վարել Պաղեստինի հարևան արաբական երկրների՝ պաղեստինյան հիմնախնդրի նկատմամբ հստակ դիրքորոշման սահմանումից հետո՝ ակնարկելով, որ Գերմանիայի աջակցությունն ստանալու համար արաբները պետք է միասնական հակաբրիտանական դիրքորոշում որդեգրեին, այսինքն՝ ոչ թե բավարարվեին միայն Փիլի հանձնաժողովի զեկույցի քննադատությամբ, այլև պաշտոնապես հակաբրիտանական հայտարարություններ անեին՝ հրաժարվելով Մեծ Բրիտանիայի հետ համագործակցության ճանապարհով պաղեստինյան հիմնախնդրի լուծման գաղափարից[14]:

Հարկ է նշել, որ Փիլի հանձնաժողովի զեկույցն արժանացավ Իրաքի և Սաուդյան Արաբիայի քննադատությանը[15]: Բացի այդ, 1937թ. սեպտեմբերի 8-10-ը Սիրիայի Բլուդան քաղաքում կայացավ համաարաբական կոնֆերանս (Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Անդրհորդանանի, Եգիպտոսի, Եմենի և պաղեստինցի արաբների ներկայացուցիչների մասնակցությամբ), որը նույնպես քննադատեց վերոհիշյալ հանձնաժողովի զեկույցը՝ հայտարարելով, որ պաղեստինյան հիմնախնդիրը կարող էր լուծվել միայն բրիտանական մանդատը դադարեցնելու և Պաղեստինում Մեծ Բրիտանիայի հետ սերտ հարաբերություններով անկախ արաբական պետություն ստեղծելու միջոցով[16]: Թեև հարևան արաբական երկրները դեմ էին Պաղեստինի բաժանման ծրագրին, սակայն չընդունեցին Դյոհլեի ակնարկած հակաբրիտանական դիրքորոշումը: Միասնական հակաբրիտանական դիրքորոշում չկար նույնիսկ պաղեստինցի արաբների շրջանում: Եթե ալ-Հուսեյնիների ընտանիքի գլխավորությամբ Արաբական գերագույն կոմիտեն պայքարում էր մանդատային իշխանության

---

[13] „The Consul General at Jerusalem to the Foreign Ministry, Jerusalem, July 15, 1937".- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 755-756.

[14] „The Consulate General at Jerusalem to the Foreign Ministry. Jerusalem, August 10, 1937".- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 766-768.

[15] Амин Саид, Восстания арабов в XX веке, Москва, 1964, стр. 178.

[16] Leila S. Kadi, Arab Summit Conferences and the Palestine Problem (1936-1950), (1964-1966), Beirut, 1966, p. 6.

դեմ, ապա ժառանգաբար Երուսաղեմի քաղաքապետի պաշտոնն զբաղեցնող Նաշաշիբիների ընտանիքն Անդրհորդանանի էմիր Աբդալլահի հովանավորությամբ կողմ էր բրիտանացիների հետ համագործակցելով պաղեստինյան հիմնախնդրի համար լուծում գտնելուն[17]: Այդ էր պատճառը, որ գերմանացիներն արաբներին համարում էին «անվստահելի քաղաքական գործընկեր»[19] այնուամենայնիվ, Փիլի հանձնաժողովի զեկույցի հրապարակվելուց հետո ավելի հաճախ շփումներ հաստատելով Պաղեստինի արաբական ապստամբության ղեկավարության հետ:

Թեև, ինչպես նշեցինք, արաբները չընդունեցին Դյոհլեի ակնարկած հակաբրիտանական դիրքորոշումը, 1937թ. սեպտեմբերի վերջին SS-ի (Schutzstaffel-Գերմանիայի Նացիոնալ-սոցիալիստական կուսակցության էլիտար զորաբանակը) սպաներ Ադոլֆ Էյխմանը և Հերբերտ Հեյգենը ժամանեցին Պաղեստին՝ Երուսաղեմում հանդիպում ունենալով Հաջ Ամին ալ-Հուսեյնիի հետ[20]: Չնայած, որ այդ հանդիպումը խիստ գաղտնի էր, և դրա մասին մանրամասներ շրջանառության մեջ չդրվեցին, ենթադրվում է, որ հենց այդ ժամանակ Մուֆթին առաջին անգամ արաբ ապստամբների համար զենք և զինամթերք խնդրեց գերմանացիներից[21]:

1937թ. հոկտեմբերի 1-ին Պաղեստինում մանդատային իշխանության լուծարած Արաբական գերագույն կոմիտեն 1937թ. հոկտեմբերի 19-ին Հաջ Ամին ալ-Հուսեյնիի գլխավորությամբ վերակազմավորվեց Բեյրութում՝ գերմանացիների հետ միջնորդավորված շփումներ հաստատելով նաև Սաուդյան Արաբիայի և Իրաքի իշխանությունների միջոցով[22]: 1937թ. նոյեմբերի 5-ին Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդ ալ-Ազիզ իբն Սաուդի անձնական քարտուղար Յուսուֆ Յասինն Իրաքում Գերմանիայի դեսպանորդ Ֆրից Գրոբբայի հետ քննարկումներ վարեց Պաղեստինում արաբական ապստամբությանը Գերմանիայի աջակցության հնարավորության հարցի շուրջ՝ համոզվելով, որ այդ աջակցության չափը կախված էր արաբական երկրների և հենց պաղեստին-

---

[17] Говард М. Сакер, История Израиля: От возникновения Сионизма до создания государство Израиль, Иерусалим, 1976, стр. 41-42.

[19] „Memorandum of Political Division VII, Berlin, August 7, 1937''.- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 762-765.

[20] The Grand Mufti and the Nazification of the Arab World. http://www.chuckmorse.com/muftism.html.

[21] Նույն տեղում:

[22] Joseph Nevo, Al-Hajj Amin and the British in World War II, Middle Eastern Studies, Vol. 20, No. 1, January 1984, pp. 3-4; Carl Brockelmann, History of the Islamic Peoples, London, 1950, p. 490.

ցիների միասնական հակաբրիտանական դիրքորոշում որդեգրելուց[23]: Փաստորեն, Փիլի հանձնաժողովի զեկույցի հրապարակումից հետո Սաուդյան Արաբիայի և Իրաքի իշխանությունները, հակաբրիտանական դիրքորոշում չորդեգրելով, միջնորդի դեր ստանձնեցին Գերմանիայի և 1936-1939թթ. Պաղեստինում արաբական ապստամբության ղեկավարության միջև շփումներում՝ նաև այդպես արտահայտելով իրենց դժգոհությունը Պաղեստինի բաժանման ծրագրի հանդեպ:

Արաբների և գերմանացիների միջև շփումները լուրջ անհանգստություն էին առաջացնում Մեծ Բրիտանիայի քաղաքական շրջանակներում: 1937թ. կեսերին Նորին մեծության կառավարության անդամներն ավելի հաճախ էին հանդես գալիս Պաղեստինում գերմանացիների հակաբրիտանական քարոզչության դեմ[24]: 1937թ. նոյեմբերի 19-ին Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Անտոնի Իդենը հուշագիր ներկայացրեց բրիտանական կառավարությանը, որում մասնավորապես ասվում էր. «Պաղեստինյան հիմնախնդրին՝ որպես տեղական նշանակություն ունեցող հարցի, մոտենալը ոչ միայն լուրջ չէ, այլև վտանգավոր է: Ամեն ինչ վկայում է այն բանի մասին, որ դա Մերձավոր Արևելքում ամենալուրջ հիմնախնդիրն է, և որ հետագայում մեր բորոր հարաբերություններն այդ տարածաշրջանի երկրների հետ գրեթե լիովին կախված կլինեն այդ հիմնախնդրի լուծումից: Եվրոպայում մեր մրցակիցները գիտեն դրա մասին... Նրանք բավականին լուրջ են տրամադրված և չեն մոռանա այդ տարածաշրջանի մասին, որտեղ մեզ ավելի շատ անախորժություն կարող են պատճառել... Պաղեստինում անկախ հրեական պետության ի հայտ գալը կառաջացնի արաբների խիստ դժգոհությունը թե՛ հրեաների, թե՛ մեր հանդեպ և կդառնա խիստ վտանգավոր նոր խնդիրների առաջացման պատճառ»[25]:

Այդուհանդերձ, արաբների շփումները գերմանացիների հետ շարունակվում էին: 1937թ. նոյեմբերին Հաջ Ամին ալ-Հուսեյնին իր պատվիրակ, Գերմանիայում ուսանած արաբ ազգայնական Սաիդ Աբդ ալ-Ֆաթթահ ալ-Իմամին Լիբանանից ուղարկեց Բեռլին՝ ներկայացնելու Գերմանիայի հետ համագործակցության իր առաջարկը[26]: Ալ-Իմամն այն ներկայացրեց Գերմա-

---

[23] „The Minister in Iraq to the Foreign Ministry, Bagdad, November 9, 1937".- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 769-772.

[24] „Memorandum by the Foreign Minister von Neurath, Berlin, October 26, 1937".- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 768-769.

[25] Э. Элазари, И. Афек, История еврейского национального движения 1914-1949, Иерусалим, 1993, стр. 101.

[26] „The Propaganda Ministry to the Foreign Minisrty, Berlin, December 14, 1937".- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 777-779.

նիայի Քարոզչության նախարարությանը, որն էլ 1937թ. դեկտեմբերի 14-ին այդ առաջարկն ուղարկեց արտգործնախարարություն: Ալ-Հուսեյնիի առաջարկի համաձայն՝ Գերմանիայի իշխանությունները թե գաղափարապես, թե նյութապես պետք է աջակցեին Պաղեստինում արաբական ապստամբությանը, այսինքն՝ պաշտոնապես հայտարարեին այդ ապստամբությանն իրենց գաղափարական աջակցության մասին ինչպես Գերմանիայի ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական շրջանակներում և անհրաժեշտ միջոցներ տրամադրեին այն իրականացնելու համար: Փոխարենը Մուֆթին խոստանում էր խթանել գերմանական առևտրի զարգացումը և տարածել գերմանական մշակույթն ու նացիոնալ-սոցիալիստական գաղափարներն արաբական աշխարհում, իսկ հետագայում՝ Պաղեստինն անկախ արաբական պետություն հռչակելուց հետո, նպաստել այդ երկրում միայն գերմանական կապիտալի և մտավոր ռեսուրսների ներդրմանը: Ըստ ալ-Հուսեյնիի՝ գերմանացիների հավանությանն արժանանալու դեպքում առաջարկի դրույթները պետք է մանրամասնորեն քննարկվեին Արաբական գերագույն կոմիտեի և Գերմանիայի ներկայացուցիչների միջև[27]:

1937թ. դեկտեմբերին Հաջ Ամին ալ-Հուսեյնիի մյուս պատվիրակը՝ 1936-1939թթ. Պաղեստինում արաբական ապստամբության ռազմական ղեկավար Ֆաուզ ադ-Դին ալ-Կաուկաջին ժամանեց Իրաք՝ դեկտեմբերի 18-ին այդ երկրի իշխանությունների միջնորդությամբ հանդիպելով Իրաքում Գերմանիայի դեսպանորդ Ֆրից Գրոբբայի հետ, որը խոստացավ միջնորդել Գերմանիայի կառավարությանը Սաուդյան Արաբիայի և Իրաքի տարածքներով պաղեստինցի արաբ ապստամբներին զենք մատակարարելու հարցում[28]:

1938թ. հունվարի 14-ին Հանս Դյոհլեն Երուսաղեմից հեռագիր ուղարկեց Գերմանիայի արտգործնախարարությանը՝ նշելով, որ արդեն պաղեստինցի արաբ ապստամբներին նյութական աջակցություն ցույց տալու ժամանակն էր, քանի որ հապաղելու դեպքում Արաբական գերագույն կոմիտեն կարող էր համաձայնության գալ Պաղեստինում բրիտանական մանդատային իշխանության հետ[29]:

Այնուամենայնիվ, գերմանացիները չշտապեցին պաղեստինցի արաբ ապստամբներին գաղափարական կամ նյութական աջակցություն ցույց տալու

---

[27] Նույն տեղում:

[28] خيرية قاسمية. فلسطين في مذكرات القاوقجي. بيروت. 1975. ص 75.

[29] „The Consul General at Jerusalem to the Foreign Ministry, Jerusalem, January 14, 1938".- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 780-781.

հարցում: Գերմանիայի արտգործնախարարության Մերձավոր և Միջին Արևելքի վարչության պետ Օտտո ֆոն Հենթիգի՝ 1938թ. օգոստոսի 28-ի հուշագրում նշված էր. «Որևէ քայլ անելիս մենք միշտ պետք է հաշվի առնենք այն փաստը, որ թագավորը (Սաուդյան Արաբիայի թագավոր Աբդ ալ-Ազիզ իբն Սաուդը – Լ. Զ.) ոչ միայն չի ընդունի հակաբրիտանական դիրքորոշում, այլև Անգլիայի հետ կհամագործակցի մեր դեմ»[30]:

Բրիտանացիների ծեռնարկած քայլերն իրենց հերթին նվազագույնի հասցրին Պաղեստինում արաբական ապստամբությանը Գերմանիայի աջակցության հնարավորությունը: 1938թ. նոյեմբերի 9-ին բրիտանական կառավարության Փիլի հանձնաժողովի առաջարկած Պաղեստինի բաժանման ծրագրի իրականացման հնարավորությունն ուսումնասիրելու նպատակով ստեղծած հանձնաժողովը (այն նախագահ Ջոն Վուդհեդի անունով կոչվեց Վուդհեդի հանձնաժողով) ներկայացրեց իր զեկույցը բրիտանական խորհրդարանին՝ պնդելով, որ մի շարք տնտեսական պատճառներով Պաղեստինի բաժանման ծրագիրն անիրականանալի էր, և առաջարկելով Պաղեստինի արաբական ու հրեական համայնքների և հարևան արաբական երկրների ներկայացուցիչներին հրավիրել Լոնդոն՝ Նորին մեծության կառավարության հետ համատեղ պաղեստինյան խնդրին լուծում տալու նպատակով[31]: 1938թ. վերջին Լոնդոնի՝ պաղեստինյան հիմնախնդրի շուրջ քննարկումներ անցկացնելու հրավերին դրական արձագանքեցին Անդրհորդանանը, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան, Իրաքը, Եմենը և պաղեստինցի արաբները[32], որը մի փոքր ժամանակավրեպ էր դարձնում Գերմանիայի՝ Պաղեստինում արաբական ապստամբությանն աջակցելու մտադրության իրականացումը: Օտտո ֆոն Հենթիգի՝ 1939թ. հունվարի 10-ի հուշագրում նշված էր. «Արտգործնախարարությունը (Գերմանիայի – Լ. Զ.) բացասական դիրքորոշում է որդեգրել Սաուդյան Արաբիայով պաղեստինցիներին զինամթերք հատկացնելու հարցի նկատմամբ... Վերմախտի (Գերմանիայի բանակը) Գլխավոր հրամանատարությունը հաստատում է, որ մինչև հիմա օրինական ճանապարհով գերմանական զենք մուտք չի գործել Սաուդյան Արաբիա: Այդ երկրում գերմանական զենք

---

[30] „Memorandum by the Head of Political Division VII, Berlin, August 27, 1938".- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 789-790.

[31] ماكدونالدعضومجلس العموم وزير المستعمرات لجلالته>>.– ملف وثائق فلسطين...ص 659-641.

<<الى جناب النبيل مالكولم

[32] Leila S. Kadi, Arab Summit Conferences and the Palestine Problem (1936-1950), (1964-1966), Beirut, 1966, p. 8.

հայտնվել է միայն աննշան քանակությամբ և անօրինական ճանապարհներով (Համենայն դեպս, գերմանական զենքն օրինական ճանապարհով կարող էր հասնել մինչև Սաուդյան Արաբիա: Պաղեստինցի արաբ ապստամբները չէին կարող օրինական կերպով գերմանական զենք ներկրել բրիտանական մանդատային իշխանության վերահսկողության ներքո գտնվող Պաղեստին - Լ. Զ.)»[33]:

Աբվերի (1925-1944թթ. Գերմանիայի բանակի գլխավոր շտաբի հետախուզական ծառայությունը) ղեկավար Վիլհելմ Կանարիսը, պաղեստինցի արաբ ապստամբներին աջակցություն ցույց տալու հարցի շուրջ քննարկումներ վարելով Սաուդյան Արաբիայի փոխարտգործնախարար Ֆուաադ Համզայի հետ և Ֆրից Գրոբայի միջոցով ստանալով Ֆաուզ ադ-Դին ալ-Կաուկաջիի՝ գերմանական զենք ստանալու խնդրանքը, 1938թ. վերջին համաձայնել էր զենքով ու զինամթերքով աջակցել Պաղեստինում արաբական ապստամբությանը, սակայն 1939թ. փետրվարի 7-ին Լոնդոնում Պաղեստինի արաբական ու հրեական համայնքների, հարևան արաբական երկրների և բրիտանական կառավարության միջև պաղեստինյան հիմնախնդրի շուրջ քննարկումների մեկնարկի և Ֆուաադ Համզային բրիտանական գործակալ լինելու հարցում կասկածելու պատճառով հրաժարվեց այդ մտքից, թեև նրա հրահանգով զենք ու զինամթերքով բեռնված երկու շոգենավ արդեն պատրաստվում էին ճանապարհ ընկնել Սաուդյան Արաբիայի և Իրաքի ուղղությամբ[34]: Այդուհանդերձ, սիոնիստ հեղինակներ Հովարդ Սակերը և Դեյվիդ Յիսրայելին, առանց որևէ աղբյուրի հղում անելու, նշել են, թե 1938թ. վերջին և 1939թ. սկզբին Կանարիսն իրականացրեց Սաուդյան Արաբիայի և Իրաքի տարածքներով Պաղեստինում արաբական ապստամբությանը մեծ քանակությամբ գերմանական զենք ու զինամթերքով աջակցելու մտադրությունը[35], մինչդեռ մենք հակված ենք հավաստի համարելու վերաբերյալ փաստաթղթային նյութը՝ հանգելով այն եզրակացության, որ Աբվերի ղեկավարի՝ պաղեստինցի արաբներին զենք ու զինամթերք տրամադրելու ծրագիրը չիրագործվեց:

Ինչ վերաբերում է անօրինական կերպով Սաուդյան Արաբիայի տարածքով գերմանական զենքի Պաղեստին ներթափանցելու հարցին, ապա նշենք, որ դրա մասին մանրամասն տեղեկություններ շրջանառության մեջ չեն

---

[33] „Memorandum by an Official of Political Division VII, Berlin, January 10, 1939''.- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 798-799.

[34] „Memorandum by the Head of Political Division VII, Berlin, February 28, 1939''.- Documents on German Foreign Policy 1918-1945..., pp. 810-811.

[35] Говард М. Сакер, История Израиля: От возникновения Сионизма до создания государство Израиль, Иерусалим, 1976, стр. 37; David Yisraeli, The Third Reich and Palestine, Middle East Studies, May 1976, p. 349.

դրվել: Պաղեստինցի արաբ ապստամբների մոտ պաղեստինյան ոստիկանությունը գերմանական արտադրության մի քանի զենք հայտնաբերեց դեռ 1936թ. նոյեմբերին[36]: Ըստ Ֆաուզ ադ-Դին ալ-Կաուկաջիի՝ միայն մեկ անգամ՝ 1937թ. դեկտեմբերին, պաղեստինցի արաբ ապստամբներին հաջողվեց անօրինական կերպով Սաուդյան Արաբիայի տարածքով գերմանական արտադրության 500 հրացան և 120 արկղ փամփուշտ ներկրել Պաղեստին[37]: Այդուհանդերձ, անօրինական ճանապարհով ներկրված փոքր քանակությամբ զենքը չէր կարող էականորեն ազդել 1936-1939թթ. Պաղեստինում արաբական ապստամբության ընթացքի վրա:

1939թ. մարտի 27-ին՝ Լոնդոնում պաղեստինյան հիմնախնդրի շուրջ անցկացվող քննարկումների վերջին օրը, Մեծ Բրիտանիայի Գաղութների նախարար Մալկոլմ Մակդոնալդը, հայտարարեց, որ Նորին մեծության կառավարությունը մտադիր էր տաս տարվա անցումային փուլից հետո չեղյալ համարել բրիտանական մանդատը Պաղեստինում և ստեղծել հրեական փոքրամասնություն ունեցող անկախ պաղեստինյան պետություն[38], որն ինչ-որ չափով մեղմեց բրիտանական մանդատային իշխանության հանդեպ պաղեստինցի արաբների դժգոհությունը: 1939թ. հուլիսին Պաղեստինում արաբական ապստամբությունն ավարտվեց[39]:

Այսպիսով, 1936-1939թթ. Պաղեստինում արաբական ապստամբության ղեկավարության և նացիստական Գերմանիայի՝ բրիտանական մանդատային իշխանության դեմ պայքարում համագործակցության եզրեր գտնելու փորձերն այնքան էլ արդյունավետ չէին: Թեև գերմանացիները շփման մեջ մտան Արաբական գերագույն կոմիտեի ներկայացուցիչների հետ, գործնականում խուսափեցին աջակցել վերոհիշյալ ապստամբությանը՝ մի քանի պատճառներով չկարողանալով օգտագործել Պաղեստինում Գերմանիայի ազդեցությունը տարածելու հնարավորությունը.

1. Պաղեստինում Մեծ Բրիտանիայի հետ հարաբերություններում Հիտլերի վարչակարգը չէր կարող որևէ պահ անտեսել գերմանաբրիտանական հարաբերությունների ընդհանուր համալիրը, որի համար առաջնայինն, այնուամենայնիվ, եվրոպական թատերաբեմն էր, որտեղ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը զիջումներ կորզելով Լոնդոնից՝ Բեռլինը պիտի

---

[36] Правда, 07.11.1936.

[37] خيرية قاسمية. فلسطين في مذكرات ألقاوقجي. بيروت. 1975. ص 77.

[38] Е. Дмитриев, Палестинский узел, Москва, 1978, стр. 27-28.

[39] Walid Khalidi, From Haven to Conquest, Beirut, 1971, p. 849.

խուսափեր վերջինիս հետ Պաղեստինում և այլուր ավելորդ սրացումներ հրահրելուց:

2. Մեծ Բրիտանիայի հետ հակամարտության մեջ մտնելու դեպքում Գերմանիան չէր ստանա Պաղեստինի հարևան արաբական երկրների աջակցությունը;

3. Պաղեստինի հարևան արաբական երկրները հիմնականում կողմ էին Մեծ Բրիտանիայի հետ համագործակցության միջոցով պաղեստինյան հիմնախնդրի հնարավոր լուծմանը;

4. Մեծ Բրիտանիան, որոշ չափով ընդառաջ գնալով արաբների պահանջներին, պաղեստինյան հիմնախնդրի կարգավորմանն ուղղված որոշակի քայլեր էր ձեռնարկում և դրանով իսկ նվազեցնում Գերմանիայի միջամտության հավանականությունը;

5. Եվ վերջապես, Լոնդոնի՝ պաղեստինյան հիմնախնդրի շուրջ քննարկումներ անցկացնելու հրավերն ընդունելուց հետո 1936-1939թթ. Պաղեստինում արաբական ապստամբության ղեկավարությունն ստիպված էր առժամանակ հրաժարվել բրիտանական մանդատային իշխանության դեմ պայքարում նացիստական Գերմանիայի հետ համագործակցելու գաղափարից, քանի որ Մեծ Բրիտանիան ընդառաջ չէր գնա պաղեստինցի արաբների պահանջներին, եթե այդ քննարկումների ընթացքում վերջիններս շարունակեին շփումները Հիտլերի վարչակարգի հետ՝ ակնկալելով նրա օժանդակությունը վերոհիշյալ ապստամբությանը: